ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնքի բնակչության ընդհանուր ժողովի

17.07.2014թ.
գ. Այգեկ

Ժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյան
քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյան
մասնակիցներ՝ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Արայիկ Հակոբյան,
համայնքի 23 բնակիչ:

Լսեցին – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը՝ բյուջեի կատարողականի և կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան/:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Ժողովի նախագահ՝ Մ. Աբրահամյան

Ժողովի քարտուղար՝ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2014 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը՝

2014 թվականի համայնքի բյուջեի վարչական մասով եկամուտների հաշվարկը կազմում է 1-ին կիսամյակի համար 14245,2 հազար դրամ, որից սեփական եկամուտները կազմում է 2409,0 հազար դրամ է: Հավաքագրվել և բյուջե է մուտքագրվել 2805,1 հազար դրամ, որը կազմում է 116,4 %:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1850,0	775,0	948,7	122,4
2	գույքահարկ	2820,9	1235,0	1381,0	111,8
3	տեղական տուրքեր	205,5	99,0	114,0	115,1
4	տեղական վճարներ	720,0	300,0	361,4	120,5
5	վարձակալական վճար	8,3	0,0	0,0	0,0
6	դոտացիա	23672,3	11836,2	11836,2	100,0
7	տարեսկզբի ազատ մնացորդ	223,2	223,2	223,2	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**29500,2**	**14468,4**	**14864,5**	**102,7**

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	կառավարման ապարատ	12268,2	6385,2	5909,0	95,6
2	նախադպրոցական կրթություն	9700,0	4720,0	4720,0	100,0
3	մշակույթի տներ, ակումբներ	2650,0	1360,0	1360,0	100,0
4	այլ մշակութային կազմակերպ.	520,0	520,0	413,2	79,5
5	հրատարակչություն	135,0	135,0	82,0	60,7
6	աղբահանություն	1320,0	660,0	550,0	83,3
7	սոց.ծրագրեր	300,0	200,0	0,0	0,0
8	պահուստային ֆոնդ	2607,0			
	ԸՆԴԱՄԵՆԸ	**29500,2**	**13980,2**	**13034,0**	**93,2**

2. 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 4 նիստ՝ 3 հերթական, 1 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 20 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 10 որոշում, արձակվել՝ 6 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 90 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 244 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Մարտի 8-ի կապակցությամբ գնվել է թատրոնի 10 տոմս, որի համար ծախսվել է 20000 ՀՀ դրամ:
7. Ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 105 կանանց՝ թոշակառու մայրերի, գյուղապետարանի, մանկապարտեզի, բուժկետի աշխատողների համար 341 250 ՀՀ դրամով գնվել են նվերներ:
8. Դպրոցի 16 շրջանավարտների համար գնվել են նվերներ՝ 52000 ՀՀ դրամ գումարով:
9. Համայնքի առաջին դասարան հաճախող 21 երեխաների համար գնվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ՝ 182 060 ՀՀ դրամ գումարով:
10. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
11. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. Համայնքային ճանապարհների վերանորոգում:
2. Գերեզմանատան ցանկապատում:
3. Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:

Այգեկ համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան

2014 թվականի հուլիսի 17

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ գ. Այգեկ